

ԿԵԱՆՔԻ ՁԱՅՆԸ

Լինում են ժամեր—հոգիս մըտորուն
Մի անգուսպ տենչով կեանքի ժխորից
Ձըգտում է թըռչել, սաւառնել հեռուն,
Այն երազ-աշխարհն, ուր ազա՛տ ցաւից,
Ազա՛տ հոգսերից, բուռն հրճուանքով
Սահում են օրերն անդորր ու փափկուն.
Ուր յաւերժ գարունն մեղմ օրօրանքով
Սըրտին բերում է երջանիկ մի քուն...

Բայց հուժկու մի ձայն, մի ձայն անմեկին,
Մըտորմունքներիս այդ վառ ժամերին,
Յամառ կըռուի է կոչում իմ հոգին
Եւ ինձ ասում է.—Երգի՛չ, քո ձեռին
Քընար կա՛յ ազդու. երկինքը նրբան
Խաղի համար չէ՛ քեզ պարզե տուած.
Վեհ է քո կոչումն, ծանրը—քո ճամբան,
Եւ անլոյս զիշեր—քո շուրջը տիրած...

Նայի՛ր, տես, ինչ դառն, ինչ թոյն օրերի
Մըռայլ պատկեր է—կեանքը բովանդակ.
Ամե՛ն տեղ կըսկիծ անհուն ցաւերի,
Ամե՛ն տեղ արցունք՝ ճընշող խաչի տակ...
Եւ չարն անպատիժ, երկաթէ բազկով
Խեղդած ամեն յոյս, ամեն վառ ձըգտում,
Խաղում է թըշուառ սմբոխի կեանքով:
Խաղում մոլեգնած ու վայրագ խընդում...

Ջարկիր քընարիդ հընչուն լարերին,
 Թո՛ղ նրանք խօսեն կեանքի ցաւերից.
 Լեզու տո՛ւր անգամ անխօս քարերին,
 Դալուկ դէմքերից վանիր սև թախիծ...
 Երգի՛չ—դու կեանքի առաքեալ—զաւակ,
 Կեանքը հըրաշունչ երգի է կարճաւ.
 Երգիր, որ լոյսի կա՛յ սուրբ յաղթանակ,
 Որ կա՛յ և կը գա՛յ ոսկի առաւօտ...

Ալ. Ժատուրեան

ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Հումգարիայի եւ Տրանսիլուանիայի հայերը: «Հանդէս Ամսօրեայ»-ից (1905 թ., № 1) քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

Այլեայլ տեսակ աչքով նայելով ու այլեայլ ակնոցէ դիտելով՝ «Հումգարիայի և Տրանսիլուանիայի ազգայիններու թիւը թէ՛ կը նուազի և թէ՛ կը բազմանայ, ինչպէս որ դիտողը կ'առու, կը նայի ու կը գննէ:

1. Կան՝ որոնք ազգային կը համարին զանոնք միայն, որոնք ազգային հայ արարողութեամբ մկրտուած ու դրոշմուած են:

2. Շատերը՝ ազգային կը համարին զանոնք ալ, որոնք՝ թէպէտ ըստ հայ արարողութեան մկրտուած չեն, որովհետեւ չեն գտած ազգային քահանայ որ զիրենք մկրտէ ու դրոշմէ—և կամ չունին յատուկ ազգային եկեղեցի ու ժողովրդապետութիւն՝ ուր որ կարենային մկրտուիլ.—սակայն հայ կը համարուին, անոր համար, վասն զի իրենց պապերն ու նոյնիսկ իրենց ծնողներն ազգային էին, ըստ հայ արարողութեան մկրտուած: Անուննին ալ աս բանիս վկայ է, ու ամեն ազգային զիրենք հայ կը ճանչնայ:

3. Կան անանկներ ալ, որոնք՝ ազգային կը համարին զանոնք միայն, որոնց լեզուն հայերէն է:—Այս իմաստով առնելով՝ Հումգարիայի և Տրանսիլուանիայի մէջ բնականապէս շատ քիչ ազգային պիտի ըլլայ. մանաւանդ եթէ նկատելու ըլ՝